

ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

# Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում-II փուլ



## ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՅՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդագրական վիճակագրության  
վերաբերյալ

Գործողություն 2.6: Ուսուցողական այց

Ուսուցողական այց Լիտվայի վիճակագրություն

2016 թ. դեկտեմբերի 6-9

Վերջնական տարբերակ



National Statistical Service  
Republic of Armenia



## Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ.....	3
2. Քաղաժ դասեր.....	3
3. Եզրակացություններ և առաջարկություններ .....	8
Հավելված 1. Ծրագիրը.....	9
Հավելված 2. Հանդիպումներին մասնակիցներ .....	12

## Հապավումներ

ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎԻ	Ազգային վիճակագրական ինստիտուտ (օր. ՀՀ ԱՎԾ)
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրություն)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

## 1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս ուսուցողական այցն իրականացվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԹՎԻՆԻՆԳ ծրագրի 2-րդ բաղադրիչի 2.6 գործողության շրջանակում:

Ուսուցողական այցի նպատակն էր լիտվական փորձի հիման վրա գործնական գիտելիքներ ձեռք բերել ժողովրդագրական վիճակագրության ոլորտում և նկարագրել, թե ինչպես կարելի է այդ գիտելիքն օգտագործել ՀՀ ԱՎԾ-ում:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցներն իրենց երախտիքն են արտահայտում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին իրենց աջակցության և Լիտվայում ստացված արժեքավոր տեղեկատվության համար, ինչը մեծապես օգտակար է եղել աշխատանքի համար:

Մույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները և դիտարկումները պատկանում են ՀՀ ԱՎԾ ուսուցողական այցի մասնակիցներին և կարող են չարտահայտել ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Լիտվայի վիճակագրության տեսակետները:

## 2. Քաղաձ դասեր

Ուսուցողական այցի ընթացքում Լիտվայի վիճակագրությունում (ԼՎ) ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության արտադրության հիմնական գործառույթների ու առանձնահատկությունների վերաբերյալ քննարկումները կազմակերպվեցին ըստ հետևյալ ուղղությունների.

- Համառոտ ակնարկ Լիտվայի պաշտոնական վիճակագրական համակարգի մասին
- Բնակչության և առանձին բնութագրիչների վիճակագրական հաշվառում
- Ծնելիության և մահացություն վիճակագրական տվյալների արտադրություն
- Միգրացիայի վիճակագրություն, ներքին և միջազգային միգրացիայի տվյալների արտադրություն
- Լիտվայի պաշտոնական վիճակագրության ձևավորման գործառույթներում բնակչության ռեգիստրի տվյալների կիրառություն
- Բնական շարժի և միգրացիայի տվյալների տարածումը աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) գործիքներով,
- Լիտվալում ապաստան հայցողների ու փախստականների, վիզաների տրամադրման, ժամանակավոր կացության թույլտվությունների և/կամ քաղաքացիությունից զրկման վիճակագրություն
- 2011թ. Լիտվայում այնցկացված մարդահամարի առանձնահատկությունները և 2021թ. անցկացվելիք մարդահամարի ծրագիրը

*Ուսուցողական այցի* առաջին օրը՝ դեկտեմբերի 6-ին, ԼՎ գլխավոր տնօրենի տեղակալ տկն. Ալդոնա Դ. Գիբայտե-Կուդզմիենեն հանդես եկավ ողջույնի խոսքով և ներկայացրեց Լիտվայի պաշտոնական վիճակագրական համակարգը, դրա կառուցվածքային առանձնահատկությունները և օրենսդրական կարգավորումները, առաքելությունը, ռազմավարությունը՝ միտված սպառողների և ռեսպոնդենտների հիմնական կարիքների ուսումնասիրությանն ու դրանց բավարարմանը, վիճակագրական աշխատանքների ծրագիրն ու համակարգումը, Եվրամիության վիճակագրական ծրագրի կատարմանը մասնակցող հաստատություններն ու նրանց պարտավորությունները: Տիկին Գիբայտե-Կուդզմիենենի կողմից ներկայացվեցին նաև վիճակագրական տվյալների հավաքագրման և

տարածման ռազմավարության, պաշտոնական վիճակագրական տվյալներ արտադրողների հետ կնքված պայմանագրերի, վիճակագրական պորտալի ձևավորման ու դրա հասանելիության, գիտական համայնքի հետ համագործակցության մասին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ԼՎ գլխավոր տնօրենի տեղակալ, սոցիալական և ժողովրդագրական աշխատանքները համակարգող, տկն. Դալիա Ամբրոզյան, իսկ Ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության բաժնի (ԺՄԲ) պետ տկն. Ինգա Մայուլայտիտեն ներկայացրեց այցելության ծրագիրը, բաժնի աշխատակիցներին և նրանց պարտավորությունները, ընդհանուր տեղեկատվություն տվեց իրականացվող աշխատանքների իրավական հիմքերի, բնական շարժի և միգրացիայի վիճակագրության հետազոտությունների, վիճակագրական համեմատելի շարքերի, մեթոդաբանության պատրաստման, տվյալների կառավարման համակարգի և արտադրության գործընթացի, տվյալների մշակման և էլքային արդյունքների ստացման վերաբերյալ:

ԺՄԲ գլխավոր մասնագետ տկն.Վիլմա Մալինաուսկիենեյը ներկայացրեց բնակչության վիճակագրության, ինչպես նաև մշտական բնակչության թվաքանակի և դրա առանձին բնութագրիչների վիճակագրական հաշվառման նպատակով օգտագործվող տվյալների աղբյուրների, գնահատման մեթոդողների, դասակարգման ու վիճակագրական մշակման, բնակչության ռեգիստրից օգտագործվող տվյալների, էլքային ցուցանիշների ձևավորման ու մեթատվյալների վերաբերյալ զեկույց: Տկն.Վիլման ներկայացրեց Լիտվայի մշտական բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի ու առանձին բնութագրիչների շարժընթացի, ինչպես նաև Եվրոստատի կողմից իրականացվող բնակչության կանխատեսումների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն (EUROPOP 2013):

ԺՄԲ գլխավոր մասնագետ տկն. Լյուդա Կասպարավիչիենը ներկայացրեց ծնելիության վիճակագրական տվյալների ձևավորման սկզբունքները, սահմանումներն ու տվյալների աղբյուրները, ազգային և միջազգային իրավական հիմքերը, դասակարգումներն ու վիճակագրական մշակումների նպատակով տվյալների հոսքերի ընթացակարգերը, ցուցանիշների ձևավորման ու մեթոդաբանության, ինչպես նաև վերջինիս բարելավման նպատակով այլ վարչական աղբյուրներից տվյալների ստացման փորձնական ծրագրերի ու դրանց հետագա կիրառության, արտադրվող հիմնական ցուցանիշների և դրանց տարածման վերաբերյալ զեկույց: Տկն. Կասպարավիչիենը հաջորդիվ ներկայացրեց մահացություն վիճակագրական տվյալների ձևավորման սկզբունքները, սահմանումներն ու տվյալների աղբյուրները, այդ թվում նաև մեռելաձեռության, կիրառվող ազգային և միջազգային իրավական հիմքերը, դասակարգումներն ու վիճակագրական մշակումների նպատակով տվյալների հոսքերի ընթացակարգերը, ինչպես նաև ցուցանիշների ձևավորման ու մեթոդաբանության, որակի գնահատման, արտադրվող հիմնական ցուցանիշների և դրանց տարածման վերաբերյալ զեկույց:

ԺՄԲ պետ տկն. Ինգա Մայուլայտիտեն ներկայացրեց նաև ծնելիության և մահացության աշխատանքները բնութագրող դասակարգումները, տվյալների ու շտեմարանների ձևավորման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանցում անձնական տվյալների պահպանման կարգը բնութագրող փաստաթղթերի (Specification of statistical survey) կառուցվածքն ու ընթացակարգը:

Լիտվայի առողջապահության նախարարության Հիգիենայի ինստիտուտի առողջապահության տեղեկատվական կենտրոնի մահացության պատճառների ռեգիստրի գլխավոր մասնագետ տկն.Վիլե Սիսիենեն, ով հրավիրված էր ԼՎ կողմից, քանի որ 2010թ.-ից այն իրականացվում է տվյալ մարմնի կողմից, ներկայացրեց մահացության պատճառների

վիճակագրական մշակման իրավական հիմքերը, մեթոդաբանությունը, թվային ծածկագրման և վիճակագրության հետ տվյալների վերահսկման գործառնությունները, ամփոփ տվյալների ստացման և հրապարակման ընթացակարգերը:

*Ուսուցողական այցի* երկրորդ օրը՝ դեկտեմբերի 7-ին, քննարկումներն ամբողջապես վերաբերվում էին Լիտվայում միգրացիայի վիճակագրության վարմանը: ԺՄԲ տեղակալ տկն.Դանգուոլե Սվիդլերինեն ներկայացրեց միգրացիայի և միջազգային պաշտպանության հիմնական ցուցանիշների, միջազգային միգրացիայի հետազոտության, իրավական կարգավորումների, կիրառվող մեթոդաբանության, տվյալների վարչական աղբյուրների, սահմանումների ու դասակարգման, միգրացիայի տվյալներ սպառողների շրջանակի, վիճակագրական տվյալների որակի ապահովման, վիճակագրական մշակման ու ցուցանիշների ձևավորման, պաշտոնական վիճակագրության պորտալում դրանց տարածման ձևաչափերի ու հրապարակումների վերաբերյալ զեկույց:

ԺՄԲ պետ տկն. Ինգա Մասյուլայտիտեն ներկայացրեց Լիտվայի միջազգային միգրացիայի վիճակագրության գնահատակների, ինչպես նաև չհայտարարված միգրացիայի ու վերադարձած միգրացիոն հոսքերի գնահատման նպատակով անցկացված հետազոտության, միջմարդահամարային ժամանակահատվածի տվյալների վերահաշվարկի, գնահատման ընթացակարգերի, երկարաժամկետ տվյալների շտեմարանի, ուսումնասիրության արդյունքների և վերադարձած միգրանտների գնահատման մեթոդի վերաբերյալ զեկույց:

ԺՄԲ գլխավոր մասնագետ տկն. Լյուչիա Պալչիասկիենեն ներկայացրեց ներքին միգրացիայի հետազոտության նպատակի, իրավական կարգավորումների և տվյալների աղբյուրների, սահմանումների, ցուցանիշների հաշվարկի, նորացված կարգավորումների հիման վրա մշակված մեթոդաբանության նախագծի և կատարված հետևությունների վերաբերյալ զեկույց:

Լիտվայի ներքին գործերի նախարարության միգրացիայի վարչությունից հրավիրված մասնագետ՝ աշխատակազմի կառավարման բաժնի ավագ մասնագետ՝ տկն.Վիդլետա Սկրիպկինան ներկայացրեց 2010թ.-ից ձևավորված օտարերկրացիների ռեգիստրը, ձևավորվող վիճակագրական հետազոտությունները Լիտվայում ապաստան հայցողների ու փախստականների, օտարերկրացիների ժամանակավոր կացության թույլտվությունների, Լիտվայի քաղաքացիություն ձեռք բերելու կամ դրանից զրկվելու և վիզաների տրամադրման վերաբերյալ, ԵՄ չափորոշիչներին համահունչ միգրացիայի վիճակագրական տվյալների ստացման, դրանց սկզբնաղբյուրներին և մեթոդաբանությանն առնչվող գործառնությունների ու հաշվառման ընթացակարգերի վերաբերյալ զեկույց:

*Ուսուցողական այցի* երրորդ օրը՝ դեկտեմբերի 8-ին, քննարկումներն ընթացան Լիտվայի պաշտոնական վիճակագրության ձևավորման գործառնություններում բնակչության ռեգիստրի տվյալների կիրառության վերաբերյալ, որը ներկայացվեց ԺՄԲ գլխավոր մասնագետ տկն.Վայվա Լեյկայտեյի կողմից: Նա ներկայացրեց բնակչության ռեգիստրից տվյալների օգտագործման ընթացակարգերը նկարագրող փաստաթուղթը՝ հաստատված ԼՎ գլխավոր տնօրենի հրամանով /ներքին օգտագործման փաստաթուղթ/, ինչպես նաև

տվյալների ստացման Եվրոպական և ազգային օրենսդրական հիմքերը, հասանելի տվյալների ցանկը, դրանց մշակման ընթացակարգերը, դրանցում մասնակցող այլ վարչական աղբյուրներից ու ռեգիստրներից ստացվող տվյալները, դրա որակին վերաբերվող խնդիրները: Հաջորդիվ ԺՄԲ պետ տկն. Ինգա Մայուլայտիտեն ներկայացրեց տարբեր վարչական աղբյուրներից (բնակչության ռեգիստր, վիճակագրական բիզնես ռեգիստր, սոցիալական ապահովության հիմնադրամ) տվյալների օգտագործումը ժողովրդագրական և միգրացիայի տվյալների արտադրության նպատակով, ապահովելով դրանց ամբողջականությունն ու համապատասխանությունը, ժամկետայնությունն ու ճշգրտությունը, համադրելիությունն ու կապակցվածությունը, մատչելիությունն ու հստակությունը, ծախսերի արդյունավետությունը, ռեսպոնդենտների ցածր ծանրաբեռնվածությունը:

Այնուհետև տկն.Վիլմա Մալինաուսկիենեյի, տկն.Լյուդա Կասպարավիչիենի, տկն.Դանգուլե Սվիդլերիենեի և տկն. Լյուչիա Պալչիասկիենեի կողմից ներկայացվեցին, համապատասխանաբար՝ բնակչության, ծնելիության և մահացության, միջազգային, ներքին միգրացիայի վիճակագրության որակի ցուցանիշները, մասնավորեցնելով, հիմնական վիճակագրական գործառույթների, մեթոդաբանության մշակման, տվյալների նախնական շտեմարանների ձևավորման, վիճակագրական տեղեկատվության պատրաստման վրա ծախսված աշխատանքային ժամերի, իրականացման ժամկետների, տվյալների հասանելիության վերաբերյալ զեկույցներ:

ԺՄԲ պետ տկն. Ինգա Մայուլայտիտեն ներկայացրեց ժողովրդագրությանը և միգրացիային առնչվող տվյալների տարածման պաշտոնական վիճակագրական պորտալը, և մեկ մուտքով ազգային բոլոր տվյալների հասանելիությունն ապահովելու հնարավորության ու կիրառվող մեքենայական ծրագրերի վերաբերյալ զեկույց: Պորտալում ներկայացված են ժամանակակից վիճակագրական տվյալների շարքեր, մամուլի հաղորդագրություններ, հրապարակումներ, մեթոդաբանություն և մեթատվյալներ, դասակարգումներ, պատմական տվյալներ, էլեկտրոնային գրադարան, GIS գործիքներ, գիտական նպատակներով՝ գաղտնի վիճակագրական տվյալների հեռակա մուտքի հնարավորություն: Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) գործիքներով ներկայացվեցին նաև Լիտվայի պաշտոնական վիճակագրության պորտալից ինտերակտիվ ցուցանիշների ստացման հնարավորությունները:

ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ տկն.Կարինե Կույումջյանը ներկայացրեց տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության 2017թ. հարցաթերթում կատարված որոշակի փոփոխությունները և 2015թ. տվյալների վիճակագրական գնահատման ծրագրային հաշվարկները: Տկն. Ինգա Մայուլայտիտեյի կողմից տրվեցին համապատասխան պարզաբանումներ և լրացուցիչ գրականություն՝ հետազոտության տվյալների հետագա գնահատման նպատակով օգտագործելու համար:

Ուսուցողական այցի չորրորդ օրը՝ դեկտեմբերի 9-ին ԼՎ Մարդահամարի և հետազոտությունների կազմակերպման բաժնի պետի տեղակալ տկն.Միլդա Սիչկուտե-Սեստոկիենեն ներկայացրեց զեկույց՝ 2011թ. Լիտվայում անցկացված մարդահամարի

վերաբերյալ, մասնավորապես անդրադառնալով մարդահամարի ծրագրում բնակչության բնական շարժի և միգրացիայի վիճակագրությանն առնչվող հարցերին, ստացված տվյալներին, մեթոդաբանական առանձնահատկություններին: Նա ներկայացրեց նաև մարդահամարի արդյունքներով հրապարակված ժողովածուն և պաշտոնական վիճակագրական պորտալում տեղադրված տվյալները: Հաջորդիվ տկն. Ինգա Մայուլայտիտեն ներկայացրեց 2011թ. մարդահամարի արդյունքների հիման վրա շրջանային բնակչության թվաքանակի, բնական և միգրացիոն շարժերի ցուցանիշների վերանայման ուղղությամբ իրականացված գործառնությունների վերաբերյալ զեկույց: Աշխատանքներն իրականացվել են մեթոդաբանության, տեղեկատվական տեխնոլոգիաների և ժողովրդագրության ու միգրացիայի վիճակագրության բաժինների համատեղ քննարկումներով մշակված մեթոդների հիման վրա: Ընդ որում, իրականացված վերլուծական աշխատանքներով վերագնահատվել են նաև ծնելության ցուցանիշները:

ԼՎ Մարդահամարի և հետազոտությունների կազմակերպման բաժնի պետի տեղակալ տկն.Միլդա Միչկուտե-Մեստոկիենեն իր հաջորդ զեկույցով ներկայացրեց 2021թ. մարդահամարի համար ծրագրավորված աշխատանքները, մասնավորապես ամբողջապես ռեգիստրների հիման վրա մարդահամարի անցկացումը, ինչը բխում է հետևյալ հանգամանքներից՝ ա/ ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու անհրաժեշտությունը, բ/ տվյալների որակը բարելավելու, գ/շարունակվող բյուջետային կրճատումները, դ/սպառողների կողմից մանրամասնեցված վիճակագրական տեղեկատվության պահանջարկը, ե/ավելի արագ ու ճկուն արդյունքներ ունենալու սպառողների պահանջը: Տկն.Միլդան պատմական ակնարկով տեղեկացրեց նաև մարդահամարների ընթացակարգերում իրականացված փոփոխությունները, իրավական կարգավորումները, ուսումնասիրված վարչական աղբյուրներն ու ռեգիստրները և դրանցից 2021թ. մարդահամարի անցկացման նպատակով ընտրվածները, հիմնական առաջադրանքները, այն փոփոխականները, որոնք չեն ներառվելու ծրագրում, ինչպես նաև այս եղանակի կիրառման սահմանափակումներն ու դժվարությունները: Նոր գործիքակազմը փորձարկելու նպատակով, նախատեսվել է 2018թ.-ից սկսած մինչ քուն մարդահամարը, ամեն տարի անցկացնել փորձնական մարդահամար:

Ուսուցողական այցի ընթացքում ներկայացված բոլոր ելույթներն ուղեկցվել են թեմային առնչվող և հարակից հարց ու պատասխաններով, ինչպես նաև երկու երկրներում կիրառվող մոտեցումների համեմատություններով, լրացուցիչ պարզաբանումներով և մեկնաբանություններով:

Ուսուցողական այցի ավարտին ԼՎ կողմից ամփոփ ելույթով հանդես եկավ տկն. Ինգա Մայուլայտիտեն, ով ներկայացրեց այցելության արդյունքները, անդրադարձավ իրականացվելիք հանձնարարականներին և սպասվող միջոցառումներին: Մասնավորապես, պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչ փորձագիտական խմբի հաջորդ առաքելությունը նրանց՝ ՀՀ միգրացիայի տվյալները բնութագրող դասակարման փաստաթղթի նախագծի ու տվյալների շտեմարանի փոփոխականների վերաբերյալ, պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ:

ՀՀ ԱՎԾ պատվիրակության կողմից՝ տկն. Կարինե Կույումջյանը շնորհակալություն հայտնեց լիտվացի գործընկերներին ուսուցողական այցելությունը կազմակերպելու համար, և նշեց, որ այն արդյունավետ էր մասնագիտական և ընդգրկուն թեմատիկ առումով:

Քննարկվեց նաև ԵՄ փորձագետների՝ միգրացիայի բաղդրամասով հաջորդ առաքելության ծրագրի նախագիծը: ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի

պետի կողմից առաջարկվեց հաջորդ առաքելության շրջանակում ներգրավել SS գծով մասնագետ՝ միգրացիոն հոսքերի վերաբերյալ վարչական աղբյուրից ստացվող տվյալների շտեմարանի վիճակագրական մշակման գործընթացում մասնագիտական խորհրդատվություն ստանալու ակնկալիքով:

### **3. Եզրակացություններ և առաջարկություններ**

Ուսուցողական այցելությանը Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցիչների մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու Լիտվայի վիճակագրական ծառայության ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության լավագույն փորձին, տեղեկանալ բնակչության ռեգիստրի և վարչական այլ տվյալների կիրառությամբ բնակչության թվաքանակի, բնական շարժի և միգրացիայի վիճակագրական հետազոտությունների զարգացումներին, քննարկելու դրանց հնարավոր իրականացումը ՀՀ ԱՎԾ պրակտիկայում: Աշխատանքային հանդիպումները հնարավորություն ընձեռեցին ծանոթանալու ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրական տվյալների ստացման, մշակման, դասակարգման և տարածման ընթացակարգերի և առանձնահատկություններին:

Կարևոր էր նաև միգրացիայի գնահատման, չհայտարարված միգրացիայի ու վերադարձած միգրացիոն հոսքերի գնահատման նպատակով անցկացված հետազոտության, միջմարդահամարային ժամանակահատվածի տվյալների վերահաշվարկի ուղղությամբ իրականացված գործառնությունները, որոնք կարևոր են նաև ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի աշխատանքների շարունակական կատարելագործման համար: Ուսուցողական այցի ընթացքում լիտվացի փորձագետների կողմից կատարված բոլոր ներկայացումներն ուսանելի էին և մասնագիտական առումով հայկական պատվիրակության համար շատ կարևոր: Ուսանելի էր նաև վարչական ռեգիստրների լայնամասշտաբ կիրառման, ինչպես նաև տվյալների որակի կառավարման Լիտվայի վիճակագրության փորձը:

Ուսուցողական այցը հաջողված էր և շատ արդյունավետ:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում:



**Հավելված 1. Ծրագիրը**

**1<sup>ին</sup> օր, 2016 թ. դեկտեմբերի 6**

09:00 – 09:10	Ողջույնի խոսք և ներկայացում
09:10 – 10:45	Լիտվայի պաշտոնական վիճակագրական համակարգը Ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրական հետազոտությունների գործընթացի կազմակերպումը
10:45 – 11:00	<i>Սուրճի ընդմիջում</i>
11:00 – 12:30	Բնակչության վիճակագրությունը Լիտվայում. բնակչության տարբեր խմբերի գնահատում: <i>(տվյալների աղբյուրը, մեթոդաբանությունը, մասնագրումը, դասակարգումը, կողմնորոշումը ավտոմատ մշակումը, փոփոխականների կառուցումը, արդյունքերը, մեթատվյալները և այլն):</i> <b>Քննարկումներ</b>
12:30 – 14:00	<i>Նախաճաշ</i>
14:00 – 15:00	Ծնելիության վիճակագրությունը Լիտվայում <i>(տվյալների աղբյուրը, մեթոդաբանությունը, մասնագրումը, դասակարգումը, խմբագրումը, կողմնորոշումը, ավտոմատ մշակումը, փոփոխականների կառուցումը, արդյունքները, մեթատվյալները և այլն:)</i>
15:00 – 15:15	<i>Սուրճի ընդմիջում</i>
15:15 – 16:45	Մահացությունը և մահերի պատճառների վիճակագրությունը Լիտվայում <i>(իրավական հիմքերը, տվյալների աղբյուրները, մեթոդաբանությունը, մասնագրումը, դասակարգումը, խմբագրումը, կողմնորոշումը, ավտոմատ մշակումը, փոփոխականների կառուցումը, արդյունքները, մեթատվյալները և այլն):</i>
16:45 – 17:00	<b>Քննարկումներ</b>

**2<sup>րդ</sup> օր, 2016 թ. դեկտեմբերի 7**

09:00 – 10:30	Միգրացիայի վիճակագրությունը Լիտվայում
---------------	---------------------------------------

	<p><b>Միջազգային միգրացիայի վիճակագրությունը Լիտվայում</b>  <i>(տվյալների աղբյուրը, մեթոդաբանությունը, մասնագրումը, դասակարգումը, խմբագրումը, կոդավորումը, ավտոմատ մշակումը, փոփոխականների կառուցումը, արդյունքները, մեթատվյալները և այլն):</i></p>
10:30 – 10:45	<i>Մուրճի ընդմիջում</i>
10:45 – 11:15	<p><b>Չհայտարարված արտագաղթի և միգրացիոն հոսքերի գնահատում</b>  <i>( տվյալների աղբյուրը և մեթոդաբանությունը)</i></p>
11:15 – 12:30	<p><b>Ներքին միգրացիոն վիճակագրությունը Լիտվայում</b>  <i>(տվյալների աղբյուրը, մեթոդաբանությունը, մասնագրումը, դասակարգումը, խմբագրումը, կոդավորումը, ավտոմատ մշակումը, փոփոխականների կառուցումը, արդյունքները, մեթատվյալները և այլն):</i></p>
12:00 – 14:00	<i>Նախաճաշ</i>
14:00 – 15:00	<p><b>Ապաստան հայցողների և փախստականների վիճակագրությունը Լիտվայում</b>  <i>(տվյալների աղբյուրները, մեթոդաբանությունը և արդյունքները) (Հանդիպում Լիտվայի ներքին գործերի նախարարության Միգրացիոն վարչության ներկայացուցիչների հետ)</i></p>
15:00 – 15:15	<i>Մուրճի ընդմիջում</i>
15:15 – 16:00	<p><b>Վիզաներ, ժամանակավոր կացության թույլատվություններ, քաղաքացիության ստացման կամ քաղաքացիության զրկման վիճակագրությունը Լիտվայում</b>  <i>(տվյալների աղբյուրը, մեթոդաբանությունը և արդյունքները)</i>  <b>(Հանդիպում Լիտվայի ներքին գործերի նախարարության Միգրացիոն վարչության ներկայացուցիչների հետ)</b></p>
16:15 – 17:00	<b>Քննարկումներ</b>

**3<sup>րդ</sup> օր, 2016թ. դեկտեմբերի 8**

09:00 – 10:30	<p>Լիտվայի վիճակագրությունում բնակչության ռեգիստրների տվյալների օգտագործումը պաշտոնական վիճակագրության համար                  Այլ վարչական աղբյուրների օգտագործումը և որակը                  Ժողովրդագրության և միգրացիոն վիճակագրության որակի ցուցանիշները  <b>Քննարկումներ</b></p>
10:30 – 10:45	<i>Մուրճի ընդմիջում</i>

10:45 – 12:30	Ժողովրդագրության և միգրացիոն վիճակագրության տվյալների տարածումը Ժողովրդագրական և միգրացիոն վիճակագրության ցուցանիշների ինտերակտիվ ներկայացում GIS պաշտոնական վիճակագրության պորտալում
12:30 – 14:00	<i>Նախաճաշ</i>
14:00 – 15:00	Խորհրդատվություններ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթիկում արդիականացված միգրացիոն մոդուլի վերաբերյալ և ՀՀ ԱՎԾ –ում միջազգային միգրացիոն վիճակագրության արտադրման տեխնիկական մասնագրումը
15:00 – 15:15	<i>Սուրճի ընդմիջում</i>
15:15 – 17:00	Խորհրդատվություններ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթիկում արդիականացված միգրացիոն մոդուլի վերաբերյալ և ՀՀ ԱՎԾ-ում միջազգային միգրացիոն վիճակագրության արտադրման տեխնիկական մասնագրումը (շարունակություն)

4<sup>րդ</sup> օր, 2016 թ. դեկտեմբերի 9

09:00 – 10:30	Լիտվայի 2011 թ. –ի մարդահամարը: Կենսական և միգրացիոն վիճակագրության հետ կապված թեմաներ: 2011թ.մարդահամարի արդյունքների օգտագործումը կենդանածինների և ներգաղթյալների թվաքանակի արդիականացման համար:
10:30 – 10:45	<i>Սուրճի ընդմիջում</i>
10:45 – 12:30	2021թ.-ի մարդահամարը (ծրագիրը) Բնակչության վիճակագրության գնահատման վերանախագծումը Լիտվայի 2021 թ.-ի մարդահամարից հետո Քննարկումներ
12:30 – 14:00	<i>Նախաճաշ</i>
14:00 – 15:30	Խորհրդակցություններ և որոշումներ հաջորդ առաքելությունների վերաբերյալ:

## **Հավելված 2. Հանդիպումներին մասնակիցներ**

### **Մասնակիցներ ՀՀ ԱՎԾ-ից**

Տկն. Կարինե Կույումջյան, ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ

Տկն. Աննա Թոխայան, ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր  
մասնագետ

Տկն. Մուսաննա Ազատյան, ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի երկրորդ  
կարգի մասնագետ

### **Մասնակիցներ Լիտվայի վիճակագրությունից**

Տկն. Ալդոնա Դ. Գիբայտե-Կուդզմիենե - ԼՎ գլխավոր տնօրենի տեղակալ,

Տկն. Դալիա Ամբրոզայտիենե - ԼՎ գլխավոր տնօրենի տեղակալ,

Տկն. Ինգա Մասյուլայտիտե - Ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության բաժնի պետ

Տկն.Դանգուոլե Սվիդլերիենե - Ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության բաժնի պետ  
տեղակալ

Տկն.Վիլմա Մալինաուսկիենե - Ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության բաժնի  
գլխավոր մասնագետ

Տկն.Վայվա Լեյկայտե - Ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության բաժնի գլխավոր  
մասնագետ

Տկն. Լյուդա Կասպարավիչիե - Ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության բաժնի  
գլխավոր մասնագետ

Տկն. Լյուչիա Պալչիասկիենեի- Ժողովրդագրության և միգրացիայի վիճակագրության բաժնի  
գլխավոր մասնագետ

Տկն.Միլդա Սիչկուտե -Մեստոկիենեն - Մարդահամարի և հետազոտությունների  
կազմակերպման բաժնի պետի տեղակալ

Տկն.Վիոլետա Սկրիպկինա - Լիտվայի ներքին գործերի նախարարության միգրացիայի  
վարչության աշխատակազմի կառավարման բաժնի ավագ  
մասնագետ

Տկն.Վիլե Սիսիենեն - Լիտվայի առողջապահության նախարարության Հիգիենայի ինստիտուտի  
առողջապահության տեղեկատվական կենտրոնի մահացության  
պատճառների ռեգիստրի գլխավոր մասնագետ